ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2025 թվականի N 570 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1251-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, պետական գրանցման և պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի, պետական հաշվառման ազգային ու միջազգային վկայագրերի և «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրի ձևերը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը, հաշվառման համարանիշերին ներկայացվող պահանջները,

ինչպես նաև տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման ու հատկացման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1853-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1041-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1251-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման էլեկտրոնային հարթակում գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցում կատարելու կարգը՝ համաձայն N 14 հավելվածի.».

2) որոշման 1-ին կետի 15-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման էլեկտրոնային հարթակում տրանսպորտային միջոցի օտարման հասարակ գրավոր գործարք կատարելու և դրանից ծագող սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու կարգը՝ համաձայն N 15 հավելվածի.».

3) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16-րդ ենթակետով.

«16) տրանսպորտային միջոցների պետական գրանցման-հաշվառման էլեկտրոնային հարթակում տրանսպորտային միջոցի օտարման հասարակ գրավոր գործարք կատարելու և դրանից ծագող սեփականության իրավունքի միաժամանակ պետական գրանցում և պետական հաշվառում կատարելու կարգը՝ համաձայն N 16 հավելվածի:».

4) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.5-րդ կետով.

«3.5. Սահմանել, որ՝

1) սույն որոշման իմաստով հաշվառման վկայագիր է հանդիսանում նաև դրա թվային տարբերակը (թվային հաշվառման վկայագիր), որը սույն որոշմամբ սահմանված N 7 հավելվածով նկարագրված հաշվառման վկայագրի փոխարեն կամ այն տրամադրելու հետ միաժամանակ հասանելի է դարձվում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը.

2) թվային հաշվառման վկայագիրը հասանելի է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պաշտոնական կայքում՝ նույնականացման քարտի (ID) կամ բջջային նույնականացման քարտի (Mobile ID) միջոցով (խիստ նույնականացում)՝ «ԵսԵմ» ազգային նույնականացման հարթակում նույնականացում անցնելուց հետո կամ ծառայությունների մատուցման համար ստեղծված պետական բջջային հավելվածի միջոցով.

3) միայն թվային հաշվառման վկայագիր ունեցող տրանսպորտային միջոցի սեփականատերը (ներկայացուցիչը) ցանկացած ժամանակ կարող է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հաշվառման-քննական գործառույթ իրականացնող տարածքային ցանկացած ստորաբաժանումից ստանալ սույն որոշման N 7 հավելվածին համապատասխան հաշվառման վկայագիր.

4) տրանսպորտային միջոցի հաշվառման գործողության ժամանակ միայն թվային հաշվառման վկայագիր ստանալու ցանկություն հայտնելու դեպքում տպագրման սրահում հաշվառման վկայագրի տպագրման պատվեր չի տրվում, իսկ տրանսպորտային միջոցի հաշվառման գործողության ժամանակ հաշվառման վկայագիրը ներկայացնելու պահանջը չի տարածվում միայն թվային հաշվառման վկայագիր ունեցող անձանց վրա։».

5) որոշմամբ սահմանված N 14 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

6) որոշմամբ սահմանված N 15 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի.

7) որոշումը լրացնել նոր՝ N 16 հավելվածով՝ համաձայն N 3 հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ